

ՀԱԻԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ

WE BELIEVE IN ONE GOD

ԽՈՐԿՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1994

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Աղյալն Նորատունկեան՝ Հայ-Քրիստոնեայ:

Ահաւասիկ տասնեակ մը տարիներէ ի վեր կը ճանչնամ զինք, ներկայ է յաճախ այն բոլոր նախաձեռնութիւններուն, որոնք կ'առնէ- չուին հայկական արուեստին ու մշակոյթին: Ներկայ է իր համեստափայլ--բառին իսկական առումովը և ոչ ֆաղափարական --տիկնոջ հետ ու բոլորին համար ունին ազնիւ ժպիտ մը և ֆաղցր մտերմութիւն մը: Ներքին խաղաղութիւնը և բարութիւնը կը ճառագայթի իրենց դեմքերէն:

Համոզումներու կեանք մըն է, որ կ'ապրին անոնք, Քրիստոնեական հաւատքը և հայկական արմատները իրենց կեանքին շաղախը կը կազմեն ու իրենք հաւատարիմ իրենց կրօնական ու ազգային պատկանելիութիւններուն, կ'ապրին զանոնք աշխարհին դիմաց որպէս Վկայութիւն՝ կենսակից և բարբախուն:

Աղյալն Նորատունկեանի համար սակայն այս հաւատքի ապրելաձեւն ու կեանքի վկայութիւնները բաւարար չեն, ան կ'ուզէ այս իրականութիւնները՝ յաւերժական այս ճշմարտութիւնները յանձնել իր հաւատակից ու արենակից եղբայրներուն ու քոյրե- բերուն ու շաղկապեան, զանոնք եւս հրաւիրելու այս գիտակից երանութեան: Եւ անհա ան տարիներէ ի վեր յօդուածներով, գրքոյկներով գրին կը յանձնէ իր մտորումները, խոկումներն ու ապրումները, որոնք միշտ կը բխին ու կ'առաջնորդուին իր Հայ-Քրիստոնէի կենդանի գիտակցութենէն:

Ահա իր 13րդ գրքոյկը՝ **«Հաւատամք Ի Մի Աստուած»**ը:

Բնագրին պատմական պրպտումը չէ և ոչ ալ աստուածա- բանական վերլուծումը անոր բովանդակութեան, այլ միայն ու միայն դարերէն եկող և բովանդակ Քրիստոնեական Եկեղեցին իրարու շաղկապող հաւատքի այս խոր արտայայտութեան առնչուող և 20-րդ դարու հաւատացեալի մը ներքին ապրումներուն և մտաւոր խորհրդածութիւններուն պրոթկումը՝ ուր մարդն ու ազգային իրավիճակները, անհատն ու հաւաքականութիւնը, հաւատաւորն ու հաւատացեալներու ժողովը դեմ հանդիման կու գան, կը գրուցեն իրարու հետ, ուր փորձառութիւններ կը զարնուին տեսութիւններու և ուր անցեալը՝ դարաւոր իմաստութիւնը կ'աղաղակէ ներկայի իրականութիւններուն դիմաց լաւագոյն ապագայ մը կերտելու մղձաւանջովը, յուսադրութեամբն ու հրաւերովը:

Իր կրօնա-ազգային պատկանելիութեամբը հպարտ, ճակատա-բաց, և իր հաւատին ու համոզումներուն հաւատարիմ, համեստ բայց անջեղ առ ամելութիւն մը իր ուսերուն առած Հայ-եւ Քրիստոնէայ անկեղծ մարդու մը հրաւեր վկայութիւնն է այս:

Վարձեղ կատար սիրելի Ալպեր:

Աղօթարար
Խաժակ Արմէնիսկոպոս Յակոբեան
Առաջնորդ Գանատայի Հայոց

26 Յուլիս, 2004
Մոնթրէալ

Ձ Օ Ն

Լուր, անձայն ու համեստ բայց երազներու ու տեսիլքներու մարմնացումը դարձած հաւատքիս իրականացումին կ'ուզեմ մասնակից ընել ազգս և հաւատքս բաժնել ու հոգեխառնել արեւակիցներու հետ. հայ ազգս հաղորդակից ընել հաւատքի ժառանգութեան, որուն պահակն ու ժառանգորդներն ենք մենք:

Հաւատքը հայու մը անկորնչելի սեփականութիւնն ու անտրիկ միջնաբերդն է, որուն մէջ հոգին (էութիւնն իսկութիւնը) կը ջրջագայի ազատ ու անարգել մինչեւ հասնիլը իր Տիրոջ՝ Աստուծոյ: ու

Ալպէր Եղիազարեան
Յուլիս 17, 1994
Թորոնթօ

ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ

Բազմութիւն մը հետաքրքիրներու, ամբոյս մը կրաւորական բամբասողներու և նորութիւններ հետազօտողներու: Աչքեր, որոնք կը փափափին տեսնել արտասովոր դէպքեր՝ հրաշքներ ո՛չ թէ հաւատալու, այլ իրենց անկուշտ հետաքրքրութիւնը յագեցնելու համար:

Այսպիսի զանգուածներու, բարձրաձայն աղաղակներու, հրմըջտուփին և թոհուրոհին մէջ, Յիսուս Նազովրեցի Մարգարէն կը փալէ հանդարտ ու լուռ դէպի գիւղապետին (Յայրոս)ի տունը բժշկելու համար 12 տարեկան հիւանդ պարմանուհին: Աղմկարար- ներու և իրար մջտողներու անհամար բազմութեան մէջ կայ հիւանդ մը, որ երկար տարիներ տառապած է հիւանդութեամբ և մարդկային որեւէ դեղ ու դարման, բժշկական իմաստութիւն և գիտութիւն անկարող եղած են բժշկել զինք:

Այս կինը մտած չէ բազմութեան մէջ գոհացնելու իր անհատնում հետաքրքրութիւնը, այլ իր գիտակից և լոյս հաւատով մօտեցած է հրաշագործ Մարգարէին ու կը ջանայ դպնալ գէթ Անոր հագուստի ծայրին: Լուսահանդերձ Նազովրեցին կանգ կ'առնէ ու Իր բնիւշ աչքերը կը պտըցնէ գտնելու համար այն անձը որ հաւատփի, յոյսի և լոյսի շողարձակումներով դպած էր Իրեն:

Կայծակնահար եղած էր բժշկուող կինը, զգացած էր պատահած բժշկութիւնը, որ գաղտնի չէր մնացած: Յիսուս Քրիստոս Իր փաղցրասրինգ ձայնով կը հարցնէ բազմութեան, ըսելով. *«Մ'ի էր որ դպաւ ինձիս: Աջակերտներու խօսնակ Պետրոս կը պատաս- խանէ իր Վարդապետին ըսելով. «Վարդապետ, ժողովուրդը կը նեղէ ու կը սեղմէ բեզ»:* Յիսուս կրկնէ իր հարցումը ըսելով. *«Մէկը դպաւ ինձի, որովհետեւ զգացի որ ինձմէ զօրութիւն մը ելաւ»:*

Հէք կինը ամօթահար և երկիւղած, կը ծածկէ երեսը և ծնրադիր ու աղաչական ձայնով մը կը խոստովանի իր հաւատաւոր արարքը: Երկնառափ Պատգամաւոր Քրիստոս նայելով այս կնոջ աչքերուն և Իր անուշ Աչքերու գուհունակ սիրով ու յաղթապանծ հոգիով կը կնքէ պատահած հրաշագործութիւնը և կ'ըսէ.

«Ըօջալերուէ՛, աղջի՛կս, քու հաւատօքդ բեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ» -- Լուկ. Ը.48:

Այսօր ալ ժողովուրդներ՝ ամէն ազգէ և լեզուէ աստանդական կը փալեն երազանքով, երգով ու լացով: Հնադարեան հայ ժողո- վուրդն ալ միացած է

այս ֆայլարջալին: Հայ եկեղեցւոյ շարա- կաններն ու ծնորհալիներու հրեջտակածայն եղանակներն ալ կը լսուին այս բազմութեան աղաղակներու մէջէն: Ամէն Կիրակի, անհամար միլիոններու ձայներ կը կրկնեն **«ՀԱՆՄԱՐՈՒՄԻ Ի ՄԻ ԱՍՏՈՒԾ»** բազմազան լեզուներով, ազգութիւններէ և ցեղերէ: Սակայն այս ամբողջն, այս հետաքրքիրներէն, Նազովրեցի վարդապետի հետեւողներէն, զԱյն հրմշտողներէն քանի՞ հոգի կը բժշկուին, քանի՞ հատը կը հաւատայ իր կրկնած հաւատամքի բառե- բուն: Քանի՞ հաւատացեալ իմաստաւորուած է հաւատքի գօրու- թեամբ: Մեզմէ քանիներո՞ւն համար հաւատքը դարձած է *Ճանաչում և փորձառութիւն*: Քանի՞ սգաւոր միսիթարութիւն ստացած է Յարուցեալին յաղթանակով: Մեզմէ քանի՞ մեղաւորներ ստացած են մեղքերու թողութիւն և խղճի անդորրութիւն (ոչ թմրութիւն):

Ի՞նչ կը *նշանակէ* **«ՀԱՆՄԱՐՈՒՄԻ Ի ՄԻ ԱՍՏՈՒԾ»**:

Ծառ հետաքրքրաշարժ և յատկանշական է հայերէն լեզուի մէջ հաւատամքը արտասանել:

Անգլերէն լեզուի մէջ «Հաւատամք» բառը փոխանակ յոգնակի ըլլալու եզակի է. «I believe», այսինքն «*Ես* կը հաւատամ»: Անձը ի՞նք որպէս *միայն* անձ մը, անձնականացուցած կ'ըլլայ հաւատքը: (Յունարէն և Անգլերէն ճշգրիտ բնագիրներուն մէջ "We Believe" է, իսկ "I"-ը վերջամուտ փոփոխակ մըն է: Հայերէն լեզուի մէջ հաւատացեալը կը միանայ աղօթակից և ուխտակից հաւատաւորներու հոյլին ու միաձուլելով իր մանանեխածիլ հաւատալիութիւնը բոլոր խոստովանողներու հաւատքին հետ, կը վկայէ ըսելով. **«ՀԱՄԱՍՄԸ»** :

Ինչո՞ւ ամէն Կիրակի կ'արտասանենք Նիկիական Հանգանա- կը: Որովհետեւ հաւատք մը, համոզում մը երբ գիտակցութիւն է, որքան արտասանուի, այնքան կը զօրանայ ու կը ներշնչէ ենթական: Գաղափարական մը տարածելու, հաւատքը արծարծելու, կրօնքը ծանօթացնելու և եկեղեցւոյ կանթեղը վառ պահելու համար, հաւատքը արտասանուելու և վկայուելու է մարդկային ձայներգու- թեամբ:

Ինչո՞ւ հայերէն լեզուի մէջ, եկեղեցւոյ հայրերու պատրաս- տած Նիկիական Հաւատամքը յոգնակի է: Մենք հայերս Նիկիական Հաւատամքը յոգնակի կ'արտասանենք, որովհետեւ նախնական Ընդհանրական եկեղեցւոյ կողմէ յոգնակի պատրաստուեացաւ, ու նաեւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, աշակերտներուն սորվեցուցած *«Հայր Անրօ»* աղօթքն ալ յոգնակի՛ արտասանելով սորվեցուց: Աստ- ուածառաք Վարդապետը չուղղեց աշակերտները աղօթել, ըսելով.

«Այլ Հայր» որ երկինքն էս...

Ի՞նչ հանապազօր *հացը* տու՛ր *իւնձի* այսօր...

ներէ *իւնձի իմ* պարտե՛րս,

ինչպես *ես* ալ կը ներեմ *իս* պարտապաններու եւլն:
Մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս սկսաւ սորվեցնել Տէրունական Աղօթքը
ըսելով.

«Հա՛յր մեր...
մեր հանապազօրեայ հացը...
մեզի սուր...
ներե՛ մեր պարտերը...
փրկէ մեզ չարէն»:

Աղօթքով կը միանան Աստուծոյ և իրարու հետ ու խոստովանութեամբ
կը բաշխեն զիրար: Զայլերգ մը երբ առանձինն երգեն կը
խորհրդածեն, իսկ երբ զօրահանդեսի մը մէջ երգեն, կ'ելեկտրականան, կը
ներշնչուին հոգեկան բարձր տրամադրութեամբ և ստեղծագործ
ոգեւորութեամբ: Պահ մը թոհչֆ տան մեր երեւակայութեան ու
բազմութեամբ երգեն *«Մեր Հայրենիք»* ֆայլերգը թատրոնի մը մէջ ուր
համախմբուած են հազարաւոր հանդիսականներ՝ պիտի զգան որ ներքին
խանդավա- ութենէ մը տարուած, ջերմեանդ հրճուանք մը կը հոսի բառ
երուն, տողերուն, և պատկերացումներուն մէջէն: Երբ մեծ բազմութեամբ
արտասանեն մեր հաւատքը ու վկայե՛նք Աստուծոյ մասին, մենք զմեզ կը
զանենք Գերբնականին ներկայութեան մէջ, ուրկէ կը ստանանք ուժ,
զօրութիւն, անվախութիւն և վստահութիւն:

Հաւատքը զօրութեան մը ներշնչումն է: Երգե՛նք սուրբ Պատարագը
յուզումնախառն ներշնչումով և խոստովանինք նիկիա- կան Հանգանակը
ներշնչումի թոհչֆով: Երբ խորիմաց զգացում- ներով ու երկրպագական
պաշտամունքով մօտենանք սրբազան արարողութեան՝ այն ատեն պիտի
զգանք Աստուծոյ ներկայութիւնը, պիտի տեսնենք երկինքն ու երկիրը
միաձուլուած իրարու ներշն- չումի անհուն շղարջի մը ներքեւ և այդ պահը
պիտի սրբագործէ ու բծշկէ մեզ:

Կը փորձեմ թոհչֆ տալ հոգեկան երեւակայութեանս և *այլաբանական*
կերպով պեղել ներհոգւոյս ըմբոնումը նիկիական «Հաւատամք» բառին:
Փոխաբերական մօտեցումով *«Հաւատամք»* բառը (ոչ գրաբարով և ոչ
բանասիրական բառաբանութեամբ), այլ ներմարմնական զգացումներով կը
խօսի ինձի՝ նման աղերսի, աղօթքի և խնդրանքի վերացում մը ...

*«Նր հաւատամ, կ'ըզեմ հաւատալ, կը փափակիմ,
ա՛յս ինչպէ՛ն կրնամ հասնիլ այն երջանկաւէտ
հաւատալո՛ւ վիճակին: Տէ՛ր զիս ալ հասցուր այդ
երանելիներու (հաւատաւորներու) երամին: Իցի՛ւ
թէ՛ ե՛ս ալ դատնամ ուխտալից հաւատաւոր մը»*

Կան աշխարհի մէջ ջատ մը հարուստներ, գիտնականներ և ուսեալ

անձեր որում կը փափափին հաւատալ, սակայն կարծես թէ հաւատալը կը խուսափի անոնցմէ: Ճատ լաւ կը յիշեմ 42 տարիներ առաջ հանդիպում մը ունեցայ Վեր. Դոկ. Ճատ՝ Անկլիքան Բահանայի մը, որ խօսակցութեան ընթացքին սապէս արտայայտուեցաւ ինծի. « I envy your faith» *«Կը նախանձ իմ հաւատքիդ»* ինծի մեղաւորիս: Ուրիշ առթիւ ծերունի մտաւորական բարեկամի մը խոստովանանքը լսեցի որ կ'ըսէր. *«Բոլոր ունեցածս տալու պատրաստ եմ եթէ կարենամ հաւատալ»*.

Ի՞նչ է հաւատքը:

Արքազան աւետարանագիրը երկարատեւ փորձառութիւններէ, խորագգաց ապրումներէ և հրաշագեղ տեսիլքներէ յետոյ կը գրէ, ըսելով.

«Ի՞նչ է հաւատքը, եթէ ո՛չ յաւատքուած բաներու և հաստատումը և ապացոյցը այն բաներու և, որում չեն երեւիր... Հաւատով է որ կը գիտնանք թէ աշխարհները ստեղծուած են Աստուծոյ խօսքով՝ անտեսանելի բաներէն տեսանելի դառնալով» -- Եբր. ԺԱ. 1-3:

Հաւատքը մարդկային այն արարքն է, (կամք, կարողութիւն և վստահութիւն) որուն ընդմէջէն կամ միջոցով բանականութիւնը կը խոնարհի և կը հասնի գերացնծութեան որ իրմէ աւելի բարձր է և անդին: Հաւատքը հոգւոյն գերագոյն աչքն է: Ինչպէս մարմնի աչքը կը տեսնէ միայն ջօջափելին և առարկայականը, նոյնպէս ալ հոգիին աչքը՝ հաւատքը կը տեսնէ *անջօջափելին*, կ'իմանայ անլսելին և կ'իրագործէ անկարելի կարծուածը՝ անսահմանափակն ու անհնարը, որովհետեւ հաւատքը մարդ արարածին շնորհուած մեծագոյն պարգեւն է՝ աւանդը--Հոով. Ժք.3:

Հաւատքը՝ մարդու տրուած այն յաւելեալ ներանձնական զգայնութիւնը, արտաքին ֆիզիքական տպաւորութիւնը (կարողութիւնը) և գիտակցութիւնն է, որ շատ բիշեր կը գործածեն: Վերոյիշեալ առութիւնը արտասովոր թող չլի ուի ընթերցողներուն, որովհետեւ մարդկութեան շատ փոքր տոկոսը կը *գործածէ* նաեւ իրեն տրամաբանութիւնը և մտածումը, իսկ հասարակութեան մեծամասնութիւնը կը հետեւի *նախապաշարեալ կարծիքներու*, վարկածներու և ինքնզին կը վստահի ուրիշներու մտածումներուն և դատողութեանը:

Մարդկային բոլոր զարգացումները, բաղաձայնութիւնը, դաստիարակութիւնը և յառաջդիմական մղումները հաւատքի թելադրութիւններ են միայն: Մարդկութիւնը *թագաւորներ*, ունենալէ առաջ ունեցած է *աստուածներ*: Պետական վարչակարգ և իշխանութիւն ունենալէ առաջ, մարդ արարած ունեցած է կրօնք, հաւատք և բահանայական դասակարգ: Հաւատքի ակունքները կը բխին դարերու խորերէն և ցոյց կու տան մարդուն

իր իսկ ինֆնութիւնը, զանազան- նութիւնը անասուններէն: *“Ինչո՞ւ կ'ապրիմ”*ը մի միայն հաւատփի՛ լեզուով կարելի է պատասխանել: Առանց հաւատփի՛ կեանքը դատարկութիւն է, յուսահատութիւն և անձնասպանութիւն:

Հաւատփի զօրութեան և կամփի անպարտելիութեան միջոցով է միայն, որ մարդ հպումն ունեցած է Գերմարդկայինին: Նախապատ- մական բոլոր պեղումները՝ պատկերագրութիւնները, մեհենակա- ուոյցները, ծիսական լեզուն և կրօնական արարողութիւնները որքա՞ն ալ երեւին վաղնջական և յետամնաց, անոնք կենդանի ապացոյցներ են մարդ արարածի հաւատփի՛ն և հաղորդութեանը Աստուծոյ հետ, նոյնիսկ երբ անոր աստուածը **“անծանօթ”** մըն էր:

Պօղոս առաքեալ ճանելով Արիսպագոսի թատերաբեմին վրայ, իր ջուրջ հաւաքուած յոյն իմաստասէրներուն և մտփի տիտան- ներուն, քարոզեց Յիսուս Զրիստոսի աստուածայայտնութիւնը, Անոր Հայրութիւնը, բարեգթութիւնը, ողորմութիւնը և Յարութիւնը, ըսելով.

«Աթենացիներ՛, կը տեսնեմ որ դուք ըստ անեռայնի ջերմեռանդ հաւատասէր էք. քանի որ ջրջելով և տեսնելով ձեր պաշտածները՝ գտայ նաեւ բազին մը, որուն վրայ գրուած էր. “Անծանօթ Աստուծոյն”: Ինչ որ դուք կը պաշտէք առանց ճանչնալու, իսկ նոյնը կը քարոզեմ ձեզիս--Գործք. ԺԷ.22-23:

Զսաներորդ Դարու մեհենականացած մարդը իր նիւթեղէն հրաշագործութիւններով՝ հեռատեսիլի, համակարգիչի և տիեզերա- նաւի հնարքներով կը կարծէ յաջողութեամբ կառուցած ըլլալ Բաբելոնեան արդի աշտարակը և ասպարէզ կը կարդայ իր Արարիչ Աստուծոյն: Ան կը մոռնայ որ իր կարծեցեալ յառաջդիմութեան, բոլոր հնարքներուն, *ատարձր* աշխատութեան նախանիւթերը ի՛ր ստեղծագործութիւնները չեն, այլ փոխ առած է զանոնք Աստուած Ճջմարիտէն:

Յոխորտացող, անաստուած և ամբարտաւան գիտնականը տակաւին չէ կրցած ստեղծել պարզ, համեստ և ոտփի կոխան ու արջառներու կեր ճանչցուած խոնարհ խոտի ընձիւղ մը կամ ծիլ մը, որ կարենայ վերարտադրել ինֆզինֆ...: Մտածելէ դադրած, զուարճութեան և ցանկայարոյց հեշտութեան անձնատուր եղող անկայուն մարդն է, որ չի կրնար տեսնել գահավէժ վիհը անհաւա- տութեան և նիւթապաշտութեան: Ներկայ դարու անաստուած գաղա- փարականութեան բազինը՝ Համայնավարութիւնը կործանեցաւ ո՛չ թէ թնդանօթային և հրթիռային զօրութեամբ, այլ հաւատաւորներու խաչակրութեամբ, ո՛չ թէ Միջին Դարու սուր բարձրացնող Խաչակրութեամբ, այլ Յիսուս Զրիստոսի հետ *խաչակցո՞ղ* ու նահա- տակո՞ղ հաւատաւորներու անձնագոհութեամբ:

Արեւմտեան անաստուածութիւնը եւս՝ իր սիրոջ (Մատանայի) նման անտեսանելի, սակայն սողոսկող գործունէութեամբ, յարատեւ- օրէն կը խլէ իր զոհերը: Աշխարհային հեշտանհով թմրած անկարեկիր մեծամոլներ ու տգէտ անփոյթներ դարձած են կոյրերու առաջնորդ դէպի դիւրասահ ճամբաներ: Առողջ ոգին ու բարոյական ըմբռնումները պակասած և սկսած են արհամարհուիլ որովհետեւ հաւատք, ճշմարտութիւն և կրօնք այլեւս դարձած են հեռատեսիլի լուսաճաճանչ շահավաճարութիւն և սպառողականութիւն:

Արեւմտեան աշարհի մէջ ընդհանուր անտարբերութիւն մը կայ կրօնքի հանդէպ: Թմրութեան և անգիտութեան շղարջ մը, կարծես, ծածկած է ջէնջող հաւատքի օրրանը: Զրիստոնեայ ենք առանց Զրիստոսի հաւատալու. եկեղեցական ծէսերը կ'ընենք առանց այդ խորհուրդները ապրելու. Ժամ կ'երթանք առանց երեսնիս խաչակն- ֆելու: Հաւատալու առաջին նշանը՝ հոգիով և ճշմարտութեամբ աղօթե՛լն է: Արեւմուտքը ֆիմիական թմրեցուցիչի ազդեցութեան տակ չէ որ կը ֆնանայ, այլ շահադիտական, եսամոլական և փառա- մոլութեան աղիտալի թմրեցուցիչներուն: Կեանքը պարտի դառնալ հանդիսարան հաւատքի, սիրոյ և ծառայութեան: Առանց հաւատքի և հոգիի լոյսին, մտքի լոյսը սէգ ու հպարտ՝ ամբարտաւան, պատուհաս ու անէծք է աշխարհին: Հաւատալու համար միայն միտք չի՛ բաւեր, այլ հոգեւոր տեսողութիւնն ալ հարկաւոր է:

Յաւերժական փառք, հաւատքի ազատագրական պայքարին և անոր նուիրեալներուն: Աւերակ քարերն իսկ դարձած են հոգեխօս կոչնակ որոնք կը պատմեն սիրոյ և հաւատքի, զոհողութեան և անմահութեան գործերու մասին: Հաւատքի սերմերը արեւմբ ոռո- գելու է և ոչ թէ խօսքով: Հաւատքի խտացեալ լեզուն՝ վստահութիւն և զոհողութիւն է: Զրիստոնեայի մը դերը՝ հաւատալ, տառապիլ և **սպասե՛լ** է: Հաւատացեալներու չարչարանքները և սպաննութիւն- ները մարդկային կատարումներ չեն, այլ Աստուծոյ զօրութիւնն ու անկապտելի հեղինակութիւնն են: Նահատակներու և հաւատացեալ- ներու մասունքները հողին հետ շաղախուած և ընդելուզուած են, բայց չեն հողայնացած ու չեն փոջիացած, որովհետեւ յարութիւն պիտի առնեն անոնք:

«Հոգիին հաւատացողը, հոգիով ապրող, հոգեկան արժէքներ ստեղծող և զանոնք յարգել գիտցող ազգը գերեզման չունի»--Գարեգին Ա. Կաթողիկոս:

Յիսուս Մարմին եղաւ, որպէսզի մենք ալ մարմին տանք մեր հաւատքին: «Լուսինէ Զաքարեան շնորհիւ իր ջերմեռանդ հաւատքին և սիրոյն, եկեղեցական երածշտութիւնը բեմ փոխադրեց»: Մենք եւս, այսօր, անհաւատութեան, նիւթապաշտութեան և կեղծիքի ունայնապաշտ դարաշրջանին մէջ կրնանք կենսաւորել, վերար- ժեւորել մարմին տալ և գործօն դարձնել մեր հաւատքի հոգեհուր բոցը:

Անկենդան մարմինները (մոլորակային դրուժիւն) միայն շարժումներով և հակադարձումներով կը գործեն, մինչ իսկական գործողութեան համար, գերագոյն հրաշակերտութիւն՝ մարդ արա-րածին համար անհրաժեշտ է կամֆը--ազատ, անկաշկանդ ու գիտակից կամֆը: Կամֆ՝ որ ենթակայ չէ՝ նախապաշարումի կամ բոցաջունչ կիրքի: Մարդկային հոգին կերպարն է Աստուծոյ ազատ, հզօր և յաւիտենական Կամֆին: Ազգեր կը ջանան ազատագրել իրենք զիրենք անհատապէս, տնտեսապէս, քաղաքականապէս ու նաեւ հայրենիքի հողը: Ինչո՞ւ, արդեօք, ազատագրութեան պայքարին մէջ անոնք կը մոռնան ազատագրել իրենց **կամֆը** ստրկային աւանդա-պաշտութենէ, վրէժխնդրական ազգայնամոլութենէ և կրօնական խաւարակուռ նախապաշարումէ: Բազմաթիւ կրօնաւորներ, անցեա-լին ու ներկայիս, ազատախոհութեան անունին տակ կը վարագուրեն իրենց սանձարձակութիւնը կամ թոյլ կամեցողութիւնը:

Մի միայն *ազատագրուա՛ծ* կամֆ մը կրնայ հաւատալ: Հրեա-տանի պարզունակ ժողովուրդը՝ գիւղացիները, կոյրերը, հիւանդ-ները, անգրագէտ անմեղները և մանուկները ողջունեցին Նազովրեցի հրաշագործ Մարգարէն, սակայն մտաւորական կար-ծուած դպիրներն ու Փարիսեցի "բարեպաշտներ"ն ու դիւանագէտ Սադուկեցիները թէպէտ տեսան հրաշագործութիւնները ու հիացան Յիսուսի գործերուն վրայ, սակայն իրենց սրտին մէջ ասեցին Լուսահանդերձ Աստուածորդին և սպաննեցին իրենց Ազատարարը:

Ինչո՞ւ:

Որովհետեւ իրենց՝ (Քրիստոսի ժամանակակից կրօնաւորնե-րուն) համար, հայրենիք, կրօնք և ազատութիւն վաճառքի հանուած առարկաներ դարձած էին գոհացնելու համար իրենց անյագ փառա-մոլութիւնը մուրհակելով իրենց կամֆը Մատանային: Աստուծոյ հանդէպ մեր հաւատքը կը քանդակուի մեր ինքնագիտակցութեան մէջ, մի միայն մեր ազատ կամֆին թոյլատուութեամբը: Մեր սուրբերն ու մարտիրոսները առարկայականօրէն ապացուցին մեզի թէ հաւատալու համար անհրաժեշտ է անխորտակելի կամֆ: *Բաժանեալ* կամֆը ցայտուն կերպով տեսանելի դարձաւ աշակերտ-ներուն մէջ, մեզ սիրող Փրկչին Խաչելութեան ճանապարհին: Աշակերտները և Յիսուսի հետեւողները իրենց բաժանեալ կամֆին պատճառաւ դարձան կամագուրկ մեղկ և վախկոտ:

Խաչի ճանապարհին, անճառելի սիրոյ Յայտնութիւնը, կֆեցաւ խաչին ծանրութեան ներքեւ և ինկաւ: Անոր Աչքերը նայեցան ջուրջանակի տեսնելու համար Իր աշակերտներէն գոնէ քանի մը հատ քաջարի նուիրեալներ, բայց անոնք չկային... : Անոր սիրավառ Աչքերը տեսան միայն ծաղրանք և հեգնանք: Անոր անձնագոհ կարծուած և ուխտեալ երեք հաւատարիմները՝ Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս չկային: Կային միայն քանի մը կիներ, որոնք կուլային իրենց յուսահատութենէն ի տես այս անփառունակ

ողբերգութեան, որովհետեւ երեք տարի ծառայած էին Անոր, որ այսօր կը խաչուէր և որուն կեանքը կը վերջանար եղերերգութեամբ:

Գողգոթայի ճանապարհին մարդ ակնատես է երկու տեսակ հաւատքի՝ մարդկային և աստուածային, հողաշէն և հոգեղէն, գործօն, ստեղծագործ ու կասկածելի և անկարելի: Կարծատես հաւատք, որ կը տեսնէ միայն այսօրը և հիման, ու երկնայի՛ն հաւատք, որ կը տեսնէ ապագան՝ գերեզմանէն և մահէն *անդին*: Մեզ սիրող բարեգութ և ողորմած Յիսուս Զրիստոս, որ կը բալէ կատարելու ոչ թէ Ի՛ր կամքը, այլ երկնաւորին, Բարձրեային, մարդասէ՛ր Աստուծոյ կամքը: Ան միաձուլած է Իր Կամքը Հօր Կամքին և ամենագիտութեան հետ: Այս տեսարանին հակընդդէմ կը տեսնենք աջակերտներուն հաւատքը, որ դարձած է կասկած, տարակոյս և ամենաղէտալի վախճան՝ ուրացում: Լսենք աջակերտ- ները, հաւատարիմ կարծուածները, Անոր միաբանութեան մաս- նակցող և գործօն հետեւորդ եղողներու կենդանի վկայութիւնները. *«Մենք կ'ակնկալէինք որ ա՛ն պիտի փրկէր Իսրայէլը»* --Ղուկ. ԻԴ.21, ըսին դէպի եմմաուս բալոդ երկու աջակերտները:

Վերոյիջեալ խօսքերը լուսարձակի մէջ կը դնեն ու հասկնալի կը դարձնեն Յիսուսի աջակերտներուն սեւեռաքիբ ակնկալութիւնը և պատճառը, թէ ինչո՞ւ համար կամեցած էին հետեւիլ Նազովրեցի Զարոգիչին: Երբ Յիսուս Վարդապէտ չիրագործեց իրենց կամքին բմահած պահանջները՝ հայրենիքի ազատագրումը Հռոմէական լուծէն, աջակերտները լճեցին հաւատքի խարխիս իրենց Վարդա- պետը՝ ճշմարտութիւնն ու կեանքը, փնտուելու և գտնելու համար տարբեր յենարան մը, հոն կեդրոնացնելու և անով փոխարինելու համար իրենց հաւատքն ու կամքը: Այս յեղյեղուկ կամքի և հաւատքի անկայուն վիճակէն զիրենք ազատագրելու համար, Յարուցեալ և ծիածանագեղ Յիսուս կը մօտենայ հաւատքի արկածեալներուն և կ'ըսէ.

«Մ'վ մարդիկ, որ անմիտ և թուլասիրտ էք՝ հաւատալու համար քոչոր այն բաներու ն, զոր խօսեցան մարգարէները: Զէ՞ որ Զրիստոս պէտք է այդ նոյն չարչարանները կրէր և այն- պէս մտնէր իր փառքին մէջ» --Ղուկ. ԻԴ.25-26:

Մարդ արարածին հաւատքը, կամայապաշտ գաղափարակա- նութեան հետեւելու համար չէ՛, այլ հաստատ կամեցողութեամբ, յօժարամտութեամբ և գիտակից որոշումով հետեւելու է հաւատքի՝ ճշմարտութեան: Յիսուս Զրիստոսի սորվեցուցած **"Հայր մեր"** աղօթքին մէջ, մեր աղերսն ու խնդրանքն է *«եղիցին կամք Ըո որպէս յերկինս՝ և յերկրի»*: Երկնապարգեւ և անջնջելի աղօթքը անխափանելի ուղիներով կը բալէ և կ'առ աջնորդէ իրեն հետեւող- ները, որ ընդգրկեն երկնաբաշխ կամքը Արարիչ

Աստուծոյ, որ բարի է ու ճշմարիտ, յարթական է ու լիացուցիչ:

Յիսուս Բրիստոս՝ աստուածառաբ Բարի Հովիւը օրինակելի արարք մը թողուց Իր հետեւորդներուն որպէս հաւատքի և կամեցո- դութեան համադրոյթ: Հոգեկան ու մարմնական խոր տազնայի մէջ երբ ներանձնական զգայութիւնը զարհուրելի պայքար կը մղէր կեանքի և մահուան միջեւ, անհուն Զգաստութիւնը հանդիսացող Յիսուս Բրիստոս, Գեթսեմանի պարտէզին մէջ ծնրադիր և աստուածահայեաց հոգեկան աչքերով ըսաւ.

*«Հա՛յր, եթէ կ'ուզես՝ այս բաժակը ինձմէ հեռացուր,
բայց ոչ թէ ի՛մ կամքս, այլ Բո՛ւ կամքդ թող ըլլայ»*-Ղուկ. ԻԲ. 42:

Գեթսեմանի պարտէզին մէջ Յիսուսի աղօթքը կլանած էր Ձիւն, միանգամայն հանդիսանալով հաւատք, կամք և միտք: Անընկճելի կամքով ու ամուր հաւատքով մենք եւս առ Աստուած հնազանդութեան և Անոր կամքին ընդառաջումի ոգին վերակեն- դանացնելու ենք մեր մէջ ամէն անգամ երբ կը կրկնենք *«Հաւատամք ի մի Աստուած»* հոգեհմայ բառերը: Նոյնիսկ Հայաս- տանի ւերակուած եկեղեցիներու քարերը, քարե՛ր են հաւատքի ու քարե՛ր կամքի:

Հաւատն ու կամքը, մարդու հոգւոյն հայելին են ուր կը ցոլափայլի ենթակային գերբնական ձգտումը վերծանելու և մարմնացնելու իր հաւատացածը՝ իր նուիրումի առարկան: Դարերու ընթացքին մարդկութեան երազը, ձգտումը և պայքարը եղած է փառք և յաւերժութիւն: Այս ոգեղէն ձգտումներու ջօջափելի մարմնացումը կը տեսնենք հին Եգիպտացիներու մեհենական վիթխարի կարոյցներու, պատմագրութիւններու և կոթողներու ջիւղութեան մէջ: Անդիմադրելի ուժի մը ձգողութեան մէջ են երկնային մարմիններու ջարժումները, որոնք կը կատարուին ձգողական հաստատուն օրէնքներով:

Աշխարհի բոլոր անասունները և անկենդան տարրերը կ'ազ- դուին և *ալլա՛ա*, կ'ենթարկուին և կը հպատակին տիեզերքի բնական այս Զօրութեան: Մակընթացութիւնը և տեղատուութիւնը հետեւանք են արեգակի և լուսնի ազդեցութեան: Իսկ հրաջակերտ և անզուգական մարդ էակը թէեւ ենթակայ է նոյն և բազմատեսակ ազդեցութիւններու, սակայն ան միակ աստուածաբնակ էակն է, որ կրնայ իր *ազատ կամքի* իրագործումով չ'ենթարկուիլ բնական և մարմնական ազդեցութիւններու, այլ՝ յարթահարել զանոնք: Այս չի նշանակեր որ մարդ բնական զօրութիւններէ զերծ է կամ գերիվեր անոնց ազդեցութիւնէն, այլ իր աստուածապարգեւ *ազատ կամքին ջնորհիւ*, ունի յաւելեալ զօրութիւն մը հակադրելու մարմնականն ու բնականը, անձնասիրականն ու ինքնագովութիւնը, չարը և վատը:

Ինչո՞ւ «Հաւատամք ի մի՛ Աստուած» և ոչ աստուածներ:

Ինչպէս վերեւ յիշած ենք՝ մարդ արարած թագաւորներ ունենալէ առաջ

ունեցած է աստուածներ: Մարդ էակ առանց գերբնական զօրութեան, առանց յոյսի, առանց տեսիլի և առանց արտափին ակնկալութեան չէ՛ ապրած: Ինչպէս առեւանգուած երախայ մը ջարունակ կը փնտռէ զինք ծնողը, նոյնպէս մարդ էակ նախապատ- մական դարերէ ի վեր հետազօտած ու պրպտած է զԱստուած: Մարդ էակին աստուածապաշտութիւնն ու կրօնասիրութիւնը ո՛չ թէ *ստացակալ* բներեւոյթ մըն է, այլ *բնածին* աստուածապարգեւ յատկանիշ:

Բոլոր դարերու ընթացքին մարդ արարածին իմաստասիրական որոնումները զբաղուած են հոգեկանի՝ գերբնականի հարցով: Հեթանոսութեան մէջ՝ փիլիսոփան էր կատարեալը, բանականութեան թելադրութեամբ գծուած ուղին, իսկ Աւետարանը փիլիսոփայական դրութիւն մը չէ, այլ *ճամբա՛ն* է դէպի Աստուած: Յիսուս Զրիստոս՝ Իր անձնազօրի ապրումով դիւրահասկնալի դարձուց Աստուծոյ ճամբան համայն մարդկութեան: Նախաբրիստոնէական հեթանոս կրօնահաւատութիւնը՝ իր կարգ մը գաղտնի ծէսերով, բնութեան արտայայտութիւններն էր բաղադրուած մարմնական ցանկայարոյց մղումներով: Հեթանոս աշխարհի գերբնականը անզօր էր մարդ- կութեան մէջ կենդանութեան ոգի ներշնչել: Անոնց համար աղօթքը՝ զոհն էր:

Հեթանոս հաւատալիքներուն *ամբողջութիւնը* չենք կրնար համարել չար, պիղծ կամ մեղանչական: Աստուած բազմաթիւ կերպերով յայտնած է Ինքզինք նաեւ հեթանոսներուն: Բաղդաս- մամբ ներկայ *անասուն* ած- Բաղաբնակրութեան և հակա-Աստուած Բարոզչութեան, հեթանոսներ բազկատարած ընդունեցին Յիսուս Զրիստոսի Աւետարանը: Զրիստոնէութեան տեղեւայլ ընելը այսօր, ոչ թէ տկարութիւնն է կամ անզօրութիւնն է Աւետարանին, այլ անոր *սպասարդութիւն* ընող և պաշտող *անմոգի* հաւատացողներուն...:

Հեթանոս կրօններու մէջ, մարդ ի՛նքն է որ կը խորհէր ու կը շինէր աստուածները: Հին Յոյները՝ իրե՛նք կ'աստուածացնէին բնական զօրութիւնները: Հռոմէական կայսրութեան մէջ Հռոմի ծերակոյտը կ'աստուածացնէր կամ աստուածորդի կը կոչէր իր կեսարները: Յոյն դիցաբանութեան մէջ, նոյնիսկ աստուածնե՛ր ենթակայ էին անողորմ ճակատագրին: Ներկայ դարու մէջ մարդկութիւնը, անտեսելով իր հիւլէական փոքրութիւնը, ամբար- տաւանօրէն ապստամբութեան դրօշը պարզած է ընդդէմ Աստուած Ճշմարիտին:

Ինչո՞ւ Նախընտրելի է հեթանոսութիւնը, արդի անաստուա- ծութենէն: Հեթանոսութիւնը գերադաս էր, որովհետեւ իրենց պրպ- տումներու և հետազօտութիւններու մէջ, անոնք կրցան ճանչնալ, թէ իրենց բոլոր գիտցած աստուածներուն մէջ կրնայ ըլլալ, որ իրենցմէ վրիպած է իսկական և Ճշմարիտ Աստուածը: Անոնք կը հաւատային, որ մէն մի մարդու մէջ կը գտնուի աստուածային էատարր մը, սակայն ան կը կարօտի մշակման: Սոյն

էատարրին գոյութիւնն էր որ խթանեց Արեւելի Մոզերը փնտրելու և գտնելու Յիսուս Մանուկը: Հեթանոսները չունեցան այն ամբարտաւանութիւնը և յաւակնոտութիւնը թէ իրենց բով էր աստուածայայտնութեան *ակբողջականութիւնը*: Հեթանոս կրօններու մէջ հաւատքը չէր եղծանուած կամ խեղաթիւրուած, այլ հասունութեան և գիտակցութեան ոգեղէն ճանաչման հասած չէր: Հեթանոսներ և կրօն-պաշտներ կը հաւատային որ աստուածները անձնաւորութիւններ են ու մարմնացեալ անմահներ, սակայն չէին գիտեր որ միակ Աստուածը ողորմած ու բարեգութ էր հանդէպ մարդկութեան: Անոնք չէին կրցած ըմբռնել *սիրութեան* իմաստը, որովհետև հեթանոս աստուածները, որոնք ստեղծուած էին մարդոց պատկերով, թէ՛ հեջտամող էին, թէ՛ բմահաճ և թէ՛ ահարկու: Յիսուս Բրիստոսով աշխարհ ճանչցաւ սրբութիւնը, սերը մարդասիրութիւնը և Աստուած ճշմարիտը՝ Երկնաւոր Հայրը:

Բրիստոնեաներու *«Հաւատալի մի Աստուած»* խոստովանութիւնը յաւակնոտութիւն մը չէ՛, այլ վճռական վկայութիւն մը, որովհետև Պենտեկոստէն յետոյ աշակերտներու հոգեշունչ առա-բելութիւնը Բարոզչութեամբ և հրաշքներով դարձաւ ոչ թէ իմաստասիրական *տեսութիւն* մը, այլ առարկայական և իրապաշտ եղելութիւն:

*«Եւ Բանը մարմին եղաւ ու բնակեցաւ մեր մէջ.
 «Ան որ սկիզբէն էր, որու և մասին լսեցինք, որու և
 ակնատես իսկ եղանք, որու և նայեցանք, և մեր
 ձեռքերը ջօշափեցին կենաց Բանը Բանի որ կեանքը
 յայտնուեցաւ, և մենք տեսանք, կը վկայենք ու կը
 պատմենք ձեզի այն յախտենական կեանքը որ Հօր
 մօտ էր և յայտնուեցաւ մեզի»--Ա. Յով. Ա.1-2:*

Բրիստոնեական հաւատքին մէջ մարդկային էակը ինք չէ՛ որ կը գտնէ կամ կը ստեղծէ զԱստուած, այլ Արարիչ Աստուած կը յայտնէ Ինքզինք Միածին Յիսուս Բրիստոսի Մարդեղութեամբ, ոչ որպէս *դատաւոր*, ոչ որպէս ահարկու կայծակնաբոց փոթորիկ և ո՛չ ալ որպէս Պահանջատէր:

Յիսուս Բրիստոսի մարմնացումով, Աստուած ճշմարիտ յայտնուեցաւ որպէս *սիրոյ Անկաղքիւրջ* հանդէպ տառապակոծ մարդ-կութեան: Թէև երածջութիւնը արձագանգն է տիեզերքի կարգա-ւորումին ու արտայայտչական բնարեքութիւնը Աստուծոյ սիրոյն, սակայն կայ ալ աւելին մեր ըմբռնումի կարողութենէն իսկ անդին: Աստուծոյ ինքնաբացայտումը տեսիլքի մը անվերջանալի գոյացութեան կը նմանի, որ կը ներհոսի դէպի աստուածային էութիւն, ու կ'արտաքիսի դէպի տեսանելի աշխարհ անսպառ հեղումով ու կը կենսաւորէ բոլոր արարածները, որուն խորհրդանիշը՝ Լոյսն է, մղումը Սիրոյ: Սերը բառ մը չէ՛ միայն Բարոզուելու համար, այլ

կիրարկուելու՝ և դառնալու է ապրում: Գաղափարներու, զգացումներու և ապրումներու *իրացումի՛ն* մէջ փնտտելու ենք կեանքի երջանկութեան աղբիւրը: Աետարանի իւրաքանչիւր դրուագը ցոյ՛ք մըն է Աստուծոյ անհննելի սիրոյն: Հոգեկանը Աստուծոյ իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կը յայտնուի բարձրագոյն էակներու մօտ: Աստուածային ցոլացումները Հոգիէն եկած ճառագայթումներ, մտածութիւններ և զգացումներ են, որոնք մարդ էակը կ'զգաստացնեն: Գողգոթան՝ վիշտին սրբութիւնը, հաւատքին զօրութիւնը և Միրոյ ծննդագործող երկունքն է, ուր կը տեսնենք Աստուծոյ խորհրդագգաց յայտնագրութիւնը և մարդոց հանդէպ Անոր բաղքահայեաց ու խորածածուկ խորհուրդը: Աստուած կը յայտնուի Իր անհուն *սիրով*, իսկ մարդ՝ իր անսահման *չարութեամբ*: Աստուած գոյ է Իր իսկութեամբ և իրականութեամբ, իսկ մենք՝ մարդիկ և արարածներ, մեր գոյութիւնը կը պարտինք արարչագործ աստուածային Լոյս Բիտումին:

Սուրբ Հաղորդութեամբ Յիսուս մասնակից ըրաւ աշակերտ- ները Իր իսկ Մարմնին և Արեան: Այս սուրբ Խորհուրդով Մարդեղեալ Աստուածնորդին ջանաց հասկցնել իւրաքանչիւր հաւատացեալի, թէ ան պարտի ըլլալ խոնարհ և պատրաստ նոյնիսկ լուալու ոտքերը իրմէ ստորադաս անձերու և սիրելու նոյնիսկ զինք մատնող և հալածող հակառակորդները և հանդուրժելու զինք ուրացողները: Ան դիտեց Իր ջուրջը բազմած տասնմէկ աշակերտները, խորունկ և անուշ նայուածքով ու Իր հայեացքը դրոջմեց անոնց պարզունակ և անկեղծ աչքերուն խորը և բացայայտեց յախտնական կեանքի ճանապարհը ըսելով.

*«Յախտնական կեանքը այս է՝ որ ճանչնանք
միակ ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս
Քրիստոսը, զոր դու ն դրկեցիր»*-Յով. ԺԷ. 3:

զԱստուած ճանչնալ կը նշանակէ հողեղէն մեր գոյացութենէն դէպի ոգեղէն արժեքներու ճանաչումը թափանցել: Ան որ ճշմարտութիւն է՝ միեւնոյն աստէն ճանապարհ և Կեանք ալ է: Աստուած ճանչնալու գաղտնիքը Սէրն է, գերմարդկայինը, դժուարին գառի- վերը, որ լուսաճածանչ գազաթներու վրայ վսեմութիւն կու տայ բարոյական մեր կերպարին: Կրօնները հետազօտութիւնն են ճշմարտութեան, իսկ Քրիստոնէութիւնը՝ *«Գտանք մեզիան»* է:

Անքան կենդանիներ կը փնտտեն միայն կերակուր ու ցանկութիւն, իսկ մարդիկ կը տենչան գեղեցկութիւն, արդարութիւն, սէր և ճշմարտութիւն, որուն ճանապարհը *հաւատքի՛* դունէն է: Հաւատքը՝ միաժամանակ իրողութիւն է, դէպք է և եղելութիւն, որ ոչ երէկը ունի, ո՛չ այսօրը և ո՛չ ալ վաղը, այլ յախտնականութեան Լոյսէն կը ստանայ իր մշտաճառագայթ ուժը: Հաւատալու կարելիութիւնը տրուած չէ մարդոց որպէսզի անոր մասին

աւելորդաբանեն, այլ որպէսզի *հաւատն* և ապրի՛ն իրենց հաւատացածը:

Իմաստասէրներու պզտիկ փոքրամասնութիւն մըն է, որ կ'ըմբռնէ ճշմարտութիւնը *տրամաբանութեամբ*: Այլ փոքրամասնութիւն մը կը հասնի ճշմարտութեան աստուածային *յայտնութեամբ*: Հասարակութիւնը կարիքը ունի *հաւատի*: հասնելու համար Աստուած ճշմարիտին: Մարդոց յիշողութեան մէջ արիւնով գրուած ճշմարտութիւնները միայն կը յաւերժանան: Հետեւաբար լուսա- տեսիլ առաքեալներ իրենց հաւատացած ու դաւանած Աւետարանը նահատակութեամբ ջեփորեցին:

Մարդկութիւնը, այսօր, կը գտնուի հաւատի գոյամարտին ամենէն ճակատագրական հանգրուանին մէջ: Եկեղեցիներու ոչ միայն քարաջէն կառուցուածքները փլատակուած են, այլ հաւա- տացեալ կարծուածներու հաւատն ու սէրը թաղուած կը մնան գերեզմանի մը սառ մարմարներուն տակ: Եկեղեցապաշտները դառ- նալու են իրաւատէրը ո՛չ թէ յարանուանութեան մը, այլ Լոյս հաւատին, նախանձախնդիրներ և ո՛չ չէզոքներ և անտարբերներ իրենց հայրենի, խորարմատ և հոգեջունչ հաւատին:

«Անլուելի զանգակատան» կանչը կը ներկայացնէ կեանքի աննիւթապաշտ ըմբռնումները ու ենթական կ'առաջնորդէ փոր- ձառակա՛ն հաւատի: Տորրորդ դարէն ի վեր, հայ մարդու գիտակցական և ենթագիտակցական վիճակը կազմող մեծագոյն ազդակը եղած է Քրիստոնէական հաւատը: Պէտք է ջիոթել Քրիստոսի հաւատը՝ հաւատալիքի մը հետ, մին *տեսիլքն* է ճշմարիտին, իսկ միւսը անոր *քուքը*:

Հաւատը միացումն է, զօրուիլը՝ հաւատալիքին և վստահութեան: Հաւատը այնպիսի զօրութիւն մըն է, որ ենթակային էութեան և իսկութեան բնոյթը կը դառնայ, այլ խօսքով, ենթական ի՛նք հաւատի զօրութիւն կ'ըլլայ:

Հաւատալիք՝ մը՝ մտածողական, իմացական և ուսումնական արարք մըն է, որ կը տարբերի *հաւատէ*: Հաւատալիք մը ընդունելի կը դառնայ և հաւանութիւն կը ստանայ երբ ապացուցուի և փաստուի: Օրինակ, դատավարութեան մը ընթացքին վկայութիւն մը փաստուելէն յետոյ կը դառնայ հաւատալիք: Համոզում կամ մտային դիրքորոշում մը "հաւատալիք" մըն է, որ կը ստացուի վիճաբանութեան ապացուցումներով:

«Հաւատ»ը ինքնին, անձի մը մէջ *ներգործակա՛ն*, իրա- կանութիւն և ճշմարտութիւն է: Այնպիսի հեղինակաւոր և ազդեցիկ զօրութիւն մըն է որուն դիմաց որեւէ արգելք անկարող կը դառնայ:

Ո՛չ գիտութիւնը և ո՛չ իմաստասիրութիւնը ակնադիւրն են հարազատ և վաւերական հաւատի: Մտայղացուած հաւատալիքներ կրնան խեղաթիւրել և ջիոթել մեր հաւատը՝ ներհոգեկան լուսաւո- րութիւնը, մինչ հաւատի զօրութիւնը անկորնչելի է: Հաւատը կը լուսաւորէ հմտութիւնը և հասկացողութիւնը ու կ'առաջնորդէ հաւատացողը ապրումներու գերագոյն իրագործման և անոնց իրականացման:

Գիտնալը առնչակցութիւն մըն է դէպքերու, տեղեկութիւն- ներու և ճշմարտութիւններու խորքին: Հաւատքը աւելի կրօնակա՛ն յատկանիշ է: Առանց հաւատքի, մարդ էակը ո՛չ կրօնական փորձա- ութիւն կրնայ ունենալ և ո՛չ ալ վերամբարձ յափշտակութիւն և սրբութեան զգայնութիւն:

Հաւատքի խտացեալ բացատրութիւնը մէկ բառով «Այո» կամ «Ոչ» ըսել է Աստուծոյ Խօսքին: Հաւատքը՝ «Այո՛» ըսելն է Աստուծոյ Խօսքին, որուն բացայայտութիւնը *Մարդեղութիւն* է Յիսուս Զրիստոսի, ինչպէս Աւետարանները արձանագրած են:

«Հա՛յր Մեր» աղօթքին մէջ, *հաւատքը* որպէս սկզբնակէտ աւելի *վստահութիւն* է Աստուծոյ, քան հաւատալիք մը, ջերմ հաղորդականութիւն մը, որդիական յարաբերութիւն մը և հոգեկան մասնակցութիւն մը Գերբնական Միբոյ ու երկնային Ողորմութեան հետ: Յիսուս Զրիստոսի հաւատքը, իսկութեան մէջ՝ *հաղորդութիւն* մըն էր Հօր Աստուծոյ հետ, որուն բաղդատութիւնը նմանութեան ո՛չ մէկ եզր ունի մարդկային ըմբռնումով:

Հաւատալ Յիսուս Զրիստոսի կը նշանակէ՝ հաւատալ Յիսուսի նման, որով Աստուած կը պատասխանէ մեր աղերսն ու աղօթքը: Այսպիսի հաւատքը *խոստում* մըն է, թէ Մէրը ի վերջոյ կը յաղթանակէ:

«Արդ՝ կը մնան հաւատք, յոյս սէր. այս երեքը բայց ասոնց մեծագոյնը Աէ՛Րն է»:

Մեքենական աշխարհայեացք ունեցողներու համար, հաւատքը զառանցանք է, իսկ հաւատաւորի մը, զԱստուած ճանչցողի մը համար՝ կեա՛նք է, զօրութի՛ւն և փրկութիւն: Զրիստոնէութեան մէջ էականը, միշտ կրօնական հաւատքն է ոչ վարդապետութիւնը: Մշտավառ պահենք մեր հաւատքը, որուն առջեւ գիտութիւնը կը խոնարհի և փիլիսոփայութիւնը կը լռէ: Հաւատք առ Աստուած ներգործող իրականութիւն և իրողութիւն է, որ առանցֆային դեր կը խաղայ մեր ընդհանուր կենցաղավարութեան մէջ և ցոյց կու տայ յաւերժութեան ելարանը: Հաւատք կամ հաւատալ բառերը տասն անգամ աւելի գործածուած են՝ Նոր Կտակարանին մէջ քան Հին Կտակարանին, որ երեք անգամ աւելի մեծ գիրք մըն է քան Նոր Կտակարանը:

Հաւատքը արտայայտելու կերպը և զայն բացատրելու եղանակը կրնայ տարբերիլ իւրաքանչիւր յարանուանութեան մէջ, այսպիսի տարբերութիւններ, *սիրոյ փոխադարձ հասկացողութեամբ*, միու- թիւնը աւելի տիեզերական կրնան դարձնել փոխանակ իրարմէ անջատելու: Հաւատք առ Աստուած տրամաբանական ըլլալու է, սա- կայն որեւէ տրամաբանական սահմանում անբաւարար է հաւատքին դերը կատարելու: Տրամաբանութիւնը իր բանաւոր սահմանումը ունի, իսկ հաւատքը սահմանափակում չունի: Հաւատքի Ախոյեան Յիսուս ըսած է.

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ մանանեխի հատիկի չացի հաւատ ու նենամ՝ այս լերան պիտի ըսե՛մ ասկէ հո՛ւն փոխադրուէ, և պիտի տեղափոխուի. և ո՞նչ քան ձեզի համար անկարելի պիտի չ'ըլլայ»--Մատթ. ԺԷ.19:

Հնարիչ Թոմաս էտիսընի ելեկտրականութեան ջրջանին, մէկ կոճակ դարձնելով միայն մէկ իրագործում տեղի կ'ունենար, սակայն այսօր, համակարգիչ մեքենայի զօրութեամբ մէկ կոճակ դարձնելով *հազարաւոր* գործողութիւններ կարելի է կատարել:

Մեր սուրբերն ու նահատակները արարչատես հաւատով, աննկուն կամով և առանց ընկրկելու հուրի և սուրի առջեւ անտրտունջ, տուին իրենց պարանոցները անհաւատներու սուրին: Ինչո՞ւ: Որովհետեւ կը հաւատային ճշմարիտ Աստուծոյ և իրենց հաւատքը այլեւս դարձած էր *տեսաթիւն*: Անոնք հաւատալով նոյնացած էին իրենց Հաւատացածին՝ Աստուծոյ, ու նաեւ իրենց նման հաւատացողներու հետ: Մենք եւս եթէ կը հաւատանք Աստուծոյ, պարտական ենք սիրել և վստահիլ նաեւ անո՛նց, որոնք կը հաւատան... : Կարելի է անհատապէս և ազատօրէն հաւատալ, սակայն այսպիսի հաւատալը անկախօրէն և ուրիշ հաւատացեալներէ անջատուելով չգործադրուիր: Թէեւ հաւատալու ազատ իրագործումը որ կը կարծուի ըլլալ բոպէական և անձնական, իրականութեան մէջ պատմական է ու դարաւոր անցեալէն կու գայ--մեր հաւատացեալ պապերէն:

Մեր հաւատքը կու գայ արաբելական Բարոզչութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչով հռչակուած, Սահակ Մեսրոպով հայացած և Բաջն Վարդաններով արիւնացած ու պաշտպանուած Քրիստոնէական հաւատք:

«Հաւատամք ի մի Աստուած»ի շօշափելի և տեսանելի գրաւ- կանն ու երաշխիքը **Եկեղեցին** է: Եկեղեցին կը պատկանի Մի միայն Յիսուս Քրիստոսի: Ան բացայայտօրէն մատնանշած է սոյն Բննելի կէտը, Իր աշակերտներու ներկայութեան և ըսած է.

«Երանի՛ք ձեզի, Աիմո՛ւն, Յովնանի որդի, մարմինն ու արիւնը չէ որ յայտնեց ձեզի, այլ իմ Հայրս, որ երկինմէն է: Եւ ես կ'ըսեմ ձեզի, որ դու ն վե՛մ ես, և այդ վե՛մին վրայ պիտի ջիներմ իմ եկեղեցիս, և դժոխքի դռները պիտի չ'աղթահարեն զայն»--Մատթ. ԺԶ.17-18:

Ներկայ Բարեղէն եկեղեցիներն ու տաճարները կրնան աւերուիլ ու մեր հաւատքը զանազան պատճառներով կրնայ մթագ- նիլ ու աղօտանալ, սակայն անոնք նոյնիսկ այդ պայմաններուն ներքեւ կը պատմեն Յիսուս Քրիստոսի փառապանծ Յարութիւնը և միանգամայն լեռնանման հաւատքի ուժը կը փոխանցեն մեզի: Եկեղեցին ոմանց համար թառամած ու պարտուած կ'երեւի,

սակայն բուրաստան մըն է ան վարդավառ: Ան իր աւերակ վիճակին մէջն իսկ կանգուն է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժէքները՝ սէր, անձնութեան և զոհաբերութիւն: Ո՞վ է եկեղեցին եթէ ոչ դո՛ւն, ե՛ս և բոլոր անոնք որոնք կը սիրեն Յիսուս Զրիստոսը: Դարձնենք եկեղեցին մտքի և խօսքի խորհրդարան, և արծարծենք հաւատքի, ծառայութեան և նուիրումի արջաւը:

Եկեղեցին պատմութեան մէջ Զրիստոսի մարմնացումն ու ներկայութիւնը ըլլալու է: Յիսուս Զրիստոս՝ Իր ծառաներուն (եկե-ղեցւոյ) միջոցաւ կը շարունակէ այն գործը որ *“Այսաւ ընել և ուսուցանել մինչեւ այն օրը, երբ Ա Հոգիին միջոցով պատուէր տուաւ Իր ընտրած առա՛նեպ ներուս, և այսպ հաւքարձաւ”*: Եկեղեցի մը երբ միայն պետութեան մը *աշխարհի՛կ* շահերուն ծառայէ, կամ լծուի կուսակցութեան մը տիրակալութեան, ան հասած է արդէն այլասերումի վտանգաւոր վիճակին: Այն օրէն որ եկեղեցին լոկ ազգապահպանութեան և մշակութային հաստատութիւն նկատուեցաւ, դադրեցաւ գրեթէ մշակոյթ արտադրելէ: Եկեղեցին նկատուելու չէ՛ մի միայն ազգային գործօն մը: Անոր *ազգային* նկարագիրը պէտք չէ փոխարինուի *ազգայնակա՛ն* նկարագիրով: Գաղութներու մէջ մղում կայ դարձնելու եկեղեցին թանգարանի:

1453-ին, երբ Օսմանեան բանակները պաշարած էին Կոստանդնուպոլիսը, եկեղեցւոյ հայրերը ջունջ կը սպառէին ճշդելու համար հերեշտակներու սեռը և անոնց աչքերուն գոյնը: Այս բանավէճը որքա՞ն ծիծաղելի կու գայ մեզի ներկայ ապրելակերպի պայմաններուն մէջ, արդեօք արդի եկեղեցական անհասկացո-ղութիւններն ալ նմանօրինակ կարծիքներու և նախապաշարում-ներու ընդդիմադրութիւններ չե՞ն: Միթէ եկեղեցւոյ պատմական դերին ու կարեւորութեան մասին մեր ալ գաղափարը և յարգանքը պակասած չէ՞: Ծատերու համար եկեղեցւոյ **ջէնքը** այլեւս խորհրդա-նշան մը դարձած չէ՞, ուր կը հրաւիրենք կարգ մը տեղացի անձնաւորութիւններ պրոպականտելու անոնց շինութեան ճարտա-րապետական իմաստը միայն ու կը մոռնանք անոր բարոյական և հոգեւոր ուժականութիւնը:

Միթէ չգտնուեցա՞ն մարդիկ, որոնք ուզեցին եկեղեցին ունենալ առանց հաւատքի, առանց Աստուծոյ որպէս միայն թան-գարան: Եթէ պատահի որ եկեղեցին դաւաճանէ իր առաջին՝ հոգեւոր կոչումին, այն ատեն կը վերածուի ան դատարկ և անպիտան անօթի:

Եկեղեցւոյ **մեծագոյն կոչումը** սիրո՛յ գործունէութիւնն է՝ սպասաւորութիւն և ծառայութիւն: Որպէս հաւատացեալ եկեղեցա-կաններ, դիմելու ենք գթութեան կատարելութեան *“գթած եղէ՛ք ինչպէս ձեք երկնաւոր Հայրը”*-մատթ. ԻԵ.34-40: Սկզբնական դարերուն գթութեան և սիրոյ գաղափարով եկեղեցին կապուեցաւ իր ջրջապատին և աշխարհի ամբողջ

համայնքը մեկ ընտանիք է կազմուած էր, որուն հայրը Եպիսկոպոսն էր:

Եկեղեցիին թիրախ նպատակակետը *յաջողութիւն չէ՛*, այլ թափանցել է աստուածային տեսիլքներու և խորհուրդներու: Եկեղեցին *աւրբ* ըլլալու է, որովհետեւ Աստուծոյ կը պատկանի ան: Եկեղեցի ըսուածը՝ *"Հաղորդութիւն և Արքայ"* է: Եկեղեցին ծաւալեցաւ առաւելաբար կամաւոր աշխատանքի, գոհաբերութեան և ինքնա- նուիրումի շնորհիւ: Ընտանիքը առաջին եկեղեցին է, որուն *սիրտը խորան Աստուծոյ դարնալու* է: Եկեղեցին Յարուցեալ Յիսուս Բրիստոսի նիւթեղէն և տեսանելի Մարմինն է: Ան աշխարհի մէջ գոյ է վկայելու համար, նոր ընթացքով, Բրիստոսի Գալուստով, մահուամբ և յարութեամբ թէ ի՞նք *"նոր արարած"* մը եղած է:

20րդ դարու յարափոփոխ վիճակներու՝ անաստուածութեան շունչով ծնեալ, հեռատեսիլի ցանկայարոյց մղումներով դիտեցուած և բրտութեամբ ու պղծութեամբ հրապուրուած, հայր ժառանգական ու տոհմային աւանդականութեամբ՝ Բրիստոնեայ չի կրնար մնալ: Այս նորածինի մկրտութիւնն ու դրոշմուած հաւատքը պարտաւոր է որ իմաստաւորուի և արժեքաւորուած *հասկացողութիւն* դարնայ:

Արդեօք բաւակա՞ն է յոխորտալ՝ թէ առաջին Բրիստոնեայ ազգն ենք, և մկրտուած 301-ին: Ի՞նչ կ'ընենք, ի՞նչ կը վկայենք աշխարհի մեր անդրանիկ մկրտութեամբ այսօր: Ո՞ր են մեր զաւակները՝ նոր հայ սերունդը: Անոնք որքա՞ն իմաստաւորուած են հաւատքով, Բրիստոսով և յախտենական կեանքով, որուն համար մեռան մեր պապերը և սուրբերը: Ո՞ր է հայ եկեղեցին, որքանո՞վ տեր է իր կոչումին ու առաքելութեան: Կը նայի՞նք իրարու որպէս եղբայրներ, լծակիցներ, ջջակիցներ մէկ Հայ եկեղեցւոյ ուխտեալ զաւակներ, թէ բաժանեալ ենք գաղափարով, նախապաշարումով և հոգիով:

Անգամ մը եւս դիտենք զիրար ու տեսնենք Յիսուսը իւրա- քանչիւր հայ հաւատացեալին մէջ: Ճանչնա՞նք մեր եղբայրակ- ցութիւնը, լծակցութիւնը և համագործակցութիւնը նոյն հոգեւոր թիրախին, նոյն եկեղեցիին և նոյն Սուրբ Տիրոջ:

Խորհուրդ է Եկեղեցիին կեանքը--խորհուրդը չի բացատրուիր, այլ կ'ապրուի ու նուիրումի՛ հոգիով կը փոխանցուի: Աստուած՝ Խորհուրդ Խորին է անհաս և անսկիզբ: Մտքի լոյսը արեւի լոյսով անտեսանելի տիեզերք մը կը տեսնէ, որ կը կոչուի տրամաբանու- թեան ու խորհուրդի աշխարհը:

Բնութեան խորհուրդները՝

- ա. Հողը կը վերածուի բոյսի, ծառի, ցորենի:
- բ. Ջուրը կը վերածուի պտուղի, ձմերուկի:
- գ. Արեւի ճառագայթները՝ վիթամինի և ծաղիկներու գոյներու:

Մարդուն մէջ բանականի յարթանակը խորհրդանշող բարոյական ըմբռնումներու ամբողջ աշխարհ մը կայ:

ա. Սովորական լաթի կարմիր կտոր մը, որ ինքեան ոչ մէկ արժէք ունի, դիր անոր վրայ մահիկ-աստղ մը, կամ մուրճ մանգաղ մը. կը վերածուի խորհրդանշանի:

Պորնուրոյր Զրիստոսի, որու ն մէջ պահուած են գիտութեան և իմաստութեան բոլոր գանձերը'--Կող. Բ.Յ: Թափուն և սրբազան լուսիւնը կը կանչէ մեզմէ իւրաքանչիւրը խորհրդաբանելու Աստու-ծոյ հետ: Ճշմարիտ ուխտագնացութիւնը ո՛չ թէ սրբատեղի մը այցելել է, այլ հոգեկան ուղեւորութիւն մը, որ խորհրդաբանողը ի՛նք խորագգաց ոգիով կ'իրագործէ արանձնութեան մէջ աղօթելով:

Ձկարծուի թէ հաւատքը կը գործադրուի միայն կրօնակա՛ն տարածութեան մէջ, հաւատքը նաեւ այն անջօշափելի սակայն իրաւասու զօրութիւնն ու վստահութիւնն է, որ բոլորս ալ զայն ունենալով հանդերձ, մեզմէ ոմանք կը գործածեն իսկ ուրիշներ կը թերանան: Հաւատքը ոմանց մէջ Բնացած է, իսկ Բիչերու մէջ արթուն, ոչ թէ ոմանք ունին և ուրիշներ չունին:

Մեծն Աղեփսանդր դէպի Արեւելք աշխարհակալ արջաւանքի նախօրեակին, կը բաժնէ բոլոր ունեցածը իր հաւատարիմ զօրավարներուն: Անոնք երբ կը հարցնեն թէ ի՞նչ մնաց իրեն, Աղեփսանդր կը պատասխանէ. «Տոյս»: Ան կը հաւատար թէ պիտի յաղաթանակէ ու այդ համոզումով դարձաւ առաջին աշխարհակալը, և սակայն յուսախաբ եղաւ, որովհետեւ *աշխարհայիւրը* հետապնդեց:

«Քրիստափոր Միփայելեան, Միմոն Զաւարեան և Ռոստոմ Զօրեան մարդիկ էին, որոնք մեծ համբերութեամբ դարբնեցին Հայաստանի յարութեան գաղափարը և զայն վարակեցին իրենց հաւատքով» կը գրէ Հրանդ Փաստրմաճեան իր "Հայոց Պատմութիւն" գրքին մէջ:

Մեր հայրենիքը և ազգը ազատագրող նահատակները ընդհան-րապէս կը ճանչցուին որպէս կուսակցականներ և յեղափոխականներ ու աննկատ կանցնի անոնց *հաւատքը և կրօնական համոզումները*: Վերյիշենք դիւցազնաջունչ և անձնանուէր Փարամազի խօսքերը, որոնք արտասանուեցան դաժան կախաղանի մը ստուերին տակ. *«Հոն՝ ուր կախաղաններն են ճոճնում, ազատութիւնն է ման գալիս: Հոն՝ ուր մեռելներն են ննջում, Տարութիւնն է մտաշուտ»*. Մոյն խօսքերը ոճրագործի կամ անաստուած մարդու

բարբանջանքները չեն, այլ աննկուն հաւատաւորի խանդին ու կամփին առարկայական ապացոյցն է:

Հայ Բաջերու անձնանուէր մարտիկներու, հայրենիքին պա- տիւր և հաւատքը վառ պահող հերոսներու յոյսը միացած ու կցուած էր դիւցազնական սիրոյ և հաւատքի վրայ: Ասոնք հերոսացան, որովհետեւ մերժեցին հաշտուիլ իրենց պարտադրուած դառն ճակատագրին, որովհետեւ կը հաւատային Ազատութեան:

Ամերիկացիներու վիթխարի տարածութիւնը հարստութիւնը դարերով և հազարամեակներով անգոյ էր եւրոպական աշխարհի: 1492-ին Քրիստափոր Գոլումպոս երբ ճամբայ ելաւ դէպի անծանօթ Արեւմուտք, շատեր ծաղր ըրին զինքը: Անոր նաւաստիներն անգամ հաւատք չունէին իրենց նաւապետին հաւատքին և գիտութեան: Մակայն Գոլումպոս աչքերը յարած էր աստղերուն ու ականջ կ'ուտար *հաւատքէն* եկած ձայնալիքներուն: Ամենուն ծիծաղը ջարժող Արեւմտեան Ամերիկացիներն են այսօր, որ կը կերակրեն աշխարհը: Ի՞նչ ապացոյց ունէր Քրիստափոր Գոլումպոս, եթէ ոչ *Հաւատք*, այն խորունկ զգացումները, որ հողեղէն մարդ արարածը՝ հոգեղէնի կը վերածէ:

Մեր թարգմանիչները մեծ գոհողութեամբ ու գրկանքով, էջ առ էջ դրոշմեցին մեսրոպատառ լեզուն հաւատքով և այն վստա- հութեամբ, որ Աստուած Ի՛նք պիտի ընձիւղէ իրենց փրտնաջան աշխատանքը: Այսօր հայը չի կրնար պարծենալ իր թարգմա- նիչներով, Մեսրոպներով, Սահակներով, Նարեկացիներով, Ծնորհա- լիներով և Խրիմեաններով եթէ ուրանայ անոնց հաւատքը՝ **«Հաւատամք ի մի Աստուած»**ը:

* * * * *

Ինչո՞ւ հաւատալ:

Ինչո՞ւ հաւատալ Աստուծոյ: Ինչո՞ւ հաւատարմութիւն խոստանալ Արարիչ Աստուծոյ: Ինչո՞ւ սիրել զԱստուած *“մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ հոգիով և ամբողջ մտքով”*:

Ինչո՞ւ նուիրել մեր ամբողջ էութիւնը, իսկութիւնը՝ անձը անտեսանելի Զօրութեան մը, և Անձնաւորութեան մը, Որուն հետեւելու պայմանը հետեւեալն է.

«Թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը և իմ ետեւէն գայ, որովհետեւ ով որ կ'ուզէ իր անձը փրկել պիտի կորսնցնէ զայն, և ով որ կը կորսնցնէ իր անձը ինձի համար՝ պիտի գտնէ զայն».

Ինչո՞ւ համար Յիսուս Քրիստոս սոյն *գեղացոյն* նուիրումը և անձնագոհութիւնը կը պահանջէ Իրեն հետեւողներէն: Ինչո՞ւ հետեւիլ

գաղափարականի մը որ կու գայ աննշմար նազարելթ գիւղէ մը ու ոչ Աթէնսէ, չնովէ կամ Աղեֆսանդրիայէ և որուն կարգախօսին վախճանը տխուր մահն է և անփառունակ հերոսանալը...: Ինչո՞ւ մտնել շարքը ցնորամիտ կարծուած Յեղափոխականի մը, որ պիտի դրկէ Իրեն հաւատացողները որպէս *“գառնէր”* մէջ:

Մինչեւ երեւումը Լուսահանդերձ Անապատականին, աշխարհակալ մեծեր և հզօրներ իրենց հետեւողները դրկած էին որպէս *“գառնէր”* ու բորենիներ *“գառնէրու”* մէջ: Այս դաժան ողբերգութիւնը մենք հայերս լաւ կ’զգանք որովհետեւ ականատես եղած ենք մեր ցեղասպանութեան:

ԱՖիլլէս և Հեֆթոր հերոսացան Տրովաթայի պատերազմին, որովհետեւ մեռան սուրը ձեռներնին ու բացին հերոսական պայքարի էջեր: Աշխարհի մայրաքաղաքները զարդաքանդակուած են հերոսապատում կոթողներով, ուր մարդիկ ցոյց կու տան իրենց ազգի *“առջի՛ն”* զօրութիւնը և վրէժխնդրութեան սարսափը: Ռազմակոչը և առնական մարտաշունչը կարգախօսն է ծաւալապաշտութեան և ապացոյցը գերեվարութեան պայքարին:

Սուրի և վրէժխնդրութեան մարտակոչը միշտ եղած է չարախօսական, անարգական և ժխտական: Անսխալական ժամանակը ցոյց տուած է սուրի փառամոլ անբարոյական նախճիրները և աննախատեսելի հետեւանքները: Բայց աւա՛ղ: Աշխարհի ներկայ տագնապը՝ քաղաքական և ազգա-ցեղական արդիւնքն է նախորդ դարերու կոյր զօրութեան գործուած անարդարութիւններուն և անիրաւութիւններու...: Օրինակ: Արցախի, Նախիջեւանի, Արարատ-եան դաշտի եւլն...անհամար անիրաւութիւնները:

Հաւատա՛նք ի մի Աստուած, հետեւի՛նք Խաչեցեալի Ոտնահետներուն, բարձրանա՛նք, խաչակցի՛նք ու բաժնեկցի՛նք Յաւիտենականին տառապանքին, որուն մէջն է ճշմարիտ հերոսութեան նկարագիրը, յոյսի, սիրոյ, հաւատքի և Ակնադրիւրը յաւերժութեան:

Յոյն դիցաբանութեան մէջ ամենանշանաւոր հերոսն էր Հերակլէս: Իլիականի հերոսն էր ԱՖիլլէսը, Ռդիսականի հերոսը՝ Ռդիսեւսը: Հին հայկական դիցաբանութեան մէջ՝ պատերազմի, քաջութեան և յաղթանակի գերագոյն հերոսը (աստուածը) Վահագն էր:

Ասոնց բոլորը հերոսացան սուրով ու նիզակով: Հերոսացա՛ն որովհետեւ սպաննեցին ու շարդեցին իրենց հակառակորդ թշնա-միներն ու իրենց նման չմտածողները: Ո՛չ թէ պաշտպանելու համար իրենց հաւատքը և սրբութիւնները, այլ ծաւալապաշտական քաղաքականութեան և «եասի՛ փառքին» համար: Այսօր, Բանի՞ հոգի կը ճանչնայ վերոյիջեալ հերոսներու անունները յոյներէ և հայերէ գատ: Բանի՞ հոգիներ կը խոնարհին վերոյիջեալ հերոսներու շիրիմին առջեւ: Բանի՞ անմիթար ուխտաւորներ կ’ուղեւորին վա-ռելու այդ հերոսներուն կանթեղը և համբուրելու անոնց ոտնակոխ հողը: Ո՛ւր են այդ սուր ու վահան, զէնք ու վառօդ բարձրացնող-ներու փաղանգը: Ի՞նչ անունով կը կոչուին անոնք և ո՞ւր են անոնց հաւաքատեղիները:

Անոնք ոչ թէ միայն մեռած են, այլ նաեւ կորած: Անոնք կը յիշատակուին միայն գիրքերու մէջ, ու կը ներկայացուին անոնց քանդակները միայն թանգարաններու ցուցա- փեղկերու ետին:

Ճշմարիտ հերոսութեան *բարոյական* մաքարումի, զոհաբերութեան և հայրենասիրութեան վեհ սկզբունքները մարդկութիւնը սորվեցաւ Յիսուս Զրիստոսէ: Ո՛չ որպէս տեսութիւն կամ գաղափարաբանութիւն, այլ ապրումի և կենցաղավարութեան առարկայակա՛ն ու կենդանի՛ օրինակ: Մահուան դիմաց անյողորդ Յիսուս, չպահանջեց Իր հետեւորդներէն որեւէ առաւել զոհողութիւն ու նուիրում, որ Ինք անձամբ չգործադրեց:

Պատմութեան մեծագոյն անկիւնադարձը կը պատկանի անձնագրի և հրաշակերտ Յիսուս Զրիստոսի, որ բացայայտումն է անըմբռնելի Սէր Աստուծոյ: Գաղափարական մտածումներու յեղակարծ և ցնցիչ անկիւնադարձը ստեղծուեցաւ Աստուած Որդիի Մարդեղութեամբ և Անոր անձնատուութեամբ Հօրը բարի Կամփին:

Անընդունելի և անկիրարկելի "ոչխարներ գայլերու" մէջ դրկելու յաղթանակը, նման "անկէզ մորենիին" Ռահվիրա և յաղթական Զրիստոս, Ի՛նք ապացուցանեց աշխարհի: Խաւարակուռ դարերու անկերպարան Բաղաբա- կրթութեան բիրտ ուժի, անգութ տրամադրութեան և դաժան գաղափարաբանութեան մէջ Լուսահանդերձ Միածինը Իր մոմավառ զոհաբերութեամբ, Ս. Խաչի վրայէն, լուսաւորեց համայն մարդկութեան միտքը, հոգին և ըմբռնումը:

Յիսուս Զրիստոս ազգի մը, ցեղի մը կամ դիցաբանութեան մը Հերոսը չէ՛, այլ համա՛յն մարդկութեան: Միայն Արեւելի ժողովուրդները չեն, որոնք կը հետեւին Անոր, ոչ ալ միայն Արեւմուտի բանգետները: Իսլամութիւնը ընդօրինակած է Անոր աստուածային ողորմութեան ներթափանցումի գաղափարականը *«Մահման ալ բահիմ»*: *«Տանու ն մոյրմած և անյիջաչար Աստուծոյ»* բանաձեւերով: 800 միլիոն Հնդկներու հոգեկան "հայր"ը Մահաթմա Կանտի փոխ առած էր Յիսուս Զրիստոսի *«չարը բարիով»* փոխադարձելու հրաշակերտ "Ոսկի Կանոնը": Ամերիկայի սեւամորթ Մարդին Լուսէր Քինկ կրտս. և Հարաւային Աֆրիկէի Նելսըն Մանտելա յաջողութեամբ իրենց նպատակակէտին հասցուցին Նազովրեցի Մարգարէին *«նիրեցե՛ք ձեր թշնամիներու ն»* առնինմտող պատուիրանը:

Մեր գերաշնորհ սրբազաններէն մին իր այցելութիւններու ընթացքին հանդիպում մը կ'ունենայ իր գաղափարական հակառակորդներու խմակցութեան և իր հաւատի ուղղամտութեան համաձայն կ'ողջունէ զանոնք ըսելով. *«Բարի լոյս զաւակներս»*: Բարձր հոգեւորականին ընկերակցող աշխարհականները, լսելով եկեղեցականին, «զաւակներս» բառը ուղղուած անոր հակադրուած գաղափարական և Բաղաբական հակառակորդներուն, թէ կ'ապշին և թէ՛ կը նեղանան: Անձնանուէր և համեստ հոգեւորականը կը դառնայ և կ'ըսէ ի՛ր բարեկամներուն. *«Անբողջ հայ ազգը իմ զաւակներս են»*

առանց կրասակցական և քաղաքական խտրակա- նութեան:

Վերոյիշեալ սիրալիր և կաթոգին արտայայտութեամբ, Յիսուսի հաւատարիմ սպասաւորը և փոխանորդը, ձեռնթափ և նկուն ըրած կ'ըլլայ իր հակառակորդները և ապացուցած Յիսուս Զրիստոսի համայնապատում սերն ու իմաստութիւնը: Որովհետեւ մագլցիլ սիրոյ, զոհողութեան, եղբայրութեան բարձունքները, բարձրագոյն գեղեցկութեան (արարչագործութեան) ուղին են զոր Յիսուս Զրիստոս սորվեցուց Իր հետեւորդներուն:

Երկու հարիւր տարիներ Խաչակիրներ՝ իրենց մահասփիւռ սուրով ու նիզակով չկրցան ունկնդրութիւն մը կամ բանակցութիւն մը ունենալ Եգիպտոսի Սուլթանին հետ: Անոնք իրենց ետին թողուցին միայն աւերում, քանդում, ածխացած դիակներու կոյտեր, հոգեւլկում և լլկում անմեղ կոյտերու: Անոնք անգէն ու բոկոտն Փրանսիսկոս Ասիծեցին իր խոնարհութեամբ ու Յիսուսանամանութիւն ցուցնող դէմքով, կարողացաւ թէ՛ հիւրասիրուիլ Եգիպտոսի սուլթանին կողմէ և թէ՛ ունկնդրութիւն ունենալ անոր հետ:

Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի դիւցազնական նկարագիրը Անոր Հոգիի հերոսական յուսադրումին մէջն է: Այս յոյսը միացած ու կցուած է Անոր դիւցազնական *սիրոյն* և *հաւատքին* հետ: Ան կը զանգահարէ և կը սորվեցնէ մեզի հոգին կենսաւորող և կեանքը իմաստաւորող ճշմարտութիւնները՝ դժուարին զտոյլները, որ լուսաճաճանչ գազաթներու վրայ վսեմութիւն կուտայ բարոյական գաղափարներու և կը լուսաւորէ հոգեկան ուղեւորութեան ճանա- պարհը:

Յիսուս Զրիստոսի Խօսքերը ծաղրուեցան, Անոր Դիմագիծը ձաղկուեցաւ, Անոր Անունը ուրացուեցաւ, հետեւորդները հալածուեցան, բայց Անոր Խօսքերը մնացին մշտահունչ և յաւերժաբարբառ: Ան Իր Անձին, ապրումին և Ս. Խաչելութեամբ ցոյց տուաւ Աստուծոյ *Հայրակա՛ն* Դիմագիծը՝ և անսպառ Մէրը: Յիսուս ոչ միայն շալակեց խաչը, այլ կրեց ու փոխադրեց ապաշխարող մեղաւորները դժոխքի խաւարէն դէպի աստղերը եղեմի՝ յոյսի և յաւիտենական Կեանքի:

Օն յառաջ հաւատքի, զոհողութեան և սիրոյ հաւատացեալ ընկերներ, դիմե՛նք դէպի կեանք, դէպի անձնուրացութիւն, դէպի լոյս առաւօտ՝ հաւատքով և լաւատեսութեամբ: Յաւերժութեան լուսաբացը ծնունդ առաւ Գողգոթայի տառապանքներէն, Յիսուս Զրիստոսի ներում թողութենէն և թափուր գերեզմանէն: Առա- քեալներու կեանքը համակ եղաւ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն, որպէսզի չկորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Զրիստոս:

Աշխարհ պէտք չունի դիւանագիտական և նենգաւոր լեզու- ներու, մարդկութեան կարիքը սրբութեան, սիրոյ և հաւատքի՝ լեզուն է, որովհետեւ լեզուն բանալին է Աստուծոյ հետ խօսելու: Աստուծոյ հետ խօսիլը (յարաբերութիւնը) մեր առօրեայ աղօթքն է որ Յիսուս սորվեցուց Իր

աշակերներուն:

Ամուսնութիւնը (պսակ) գազաթն է երկու սերերու միասնականութեան: Ս. Գրիգոր Նարեկացին հայ գրականութեան և հոգեւոր խորհրդաբանութեան գազաթն է: Մարդասիրութեան գազաթնակէտը Աստուծոյ Միածնի Մարդեղութիւնն է: «Յարութեան տօնը կը մնայ գազաթնակէտային իմաստով ամենէն փառապանծ և ներշնչող տօնը, փառապսակը Քրիստոսի կեանքին և կտակին»:

"Ինչո՞ւ հաւատալ" հարցումին բարձրագոյն կատարը ***"Հաւա- տամք ի Յարութիւնն մեռելոցն"*** է: Յիսուս Քրիստոս պատ- մութեան մէջ միակ Անձնաւորութիւնն է, որ իրապէս կրնայ բացագանչել.

«Էս իսկ եմ յարութիւն և կեանք, ով որ կը հաւատայ ինձի, թէպէտ մեռնի ալ, պիտի ապրի. իսկ ով որ կենդանի է և կը հաւատայ ինձի յաւիտեան պիտի չմեռնի» - Յով. ԺԱ. 25-26:

Յունարէն լեզուի մէջ "յարութիւն" (անասդասիս) բառը կը նշանակէ *բարձրացնել, կանգնեցնել, արթնցնել* առաւել ըլլալով ունի նաեւ *վերակառուցումի* իմաստը:

Ողբերգութիւնը կեանքի մէկ երեսակը կը դրսեւորէ, իսկ Քրիստոսի Յարութիւնը կեանքի ամբողջական երեսակները: Անցեալի մշուշապատ դարերու երեսակայական վարպետութիւն մը չէ՛, հին ազգերու մտացածին առասպել մը չէ՛ Քրիստոսի Յարութիւնը, այլ՝ հաւատքի ոստում մը և յոյսի աներեր տեսողութիւն մը դէպի անտեսանելի կարծուածը: Հաւատալը զօրութեան մը ներշնչումն է: *«Ինչո՞ւ կ'ապրիմք»* մի միայն հաւատքի լեզուով կարելի է պատասխանել: Հաւատալով կը նոյնանանք Աստուծոյ հետ: Հաւատով՝ Աստուած և մարդ կը միանան և կը հոգեխառնուին իրարու հետ: Հաւատալով է որ բանականութիւնը կը հասնի գերացնծութեան որ իրմէ վեր է և անդին:

Արեգնաշող Յարութեան առաւօտը պատճառաբանութեամբ ո՛չ կ'ըմբռնուի և ոչ ալ կը բացատրուի: Որովհետեւ հունաւոր բանականութեամբ չենք կրնար բացատրել բացարձակը (Յարութեան դէպք իրողութիւնը) ու սահմանաւոր կամեցողութեամբ չենք կրնար վճռել և ըմբռնել Կատարեալը: Անվեհեր առաքեալներու հոյլին մէջ, Յարութեան գաղափարին և իրողութեան մեծագոյն և հզօրաշեջտ ախոյեանը հանդիսացաւ Պօղոս առաքեալ իր զանազան պատգամներով, որոնցմէ կ'ուզեմ յիշել.

«Եթէ չկայ մեռել ներու յարութիւն՝ ուրեմն Քրիստոս յարութիւն առած չէ՛ ի գուր է մեր բարոգութիւնը, ի

զուր է նաեւ ձեր հաւատքը:

*..Իսկ եթէ մեռել ներք յարութիւն չեն առներ՝
ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ: Եւ եթէ
Քրիստոս յարութիւն առած չէ ի զուր է ձեր հաւատ-
քը, և տակաւին նոյն մեղքերուն մէջ էք:*

*...եթէ միայն այս կեանքին համար յոյս դրած
ենք Քրիստոսի վրայ՝ ողորմելի ենք քան բոլոր մար-
դիկ»--Ա. Կորնթ. ԺԵ.13-19:*

Յաւերժականէն հասնող ճաճանչներու խորհուրդն ու կեանքը, որպէս
"Անլռելի զանգակատուն" մեզի կը մղէ բացազանչել.

**«Հաւատամք ՚ի մի Աստուած ՚ի Հայրն
ամենակալ... և ՚ի յարութիւնն մեռելոց,
՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց,
յարքայութիւնն երկնից և
՚ի կեանսն յաւիտենականս»:**

Ականջ տանք յաւերժաձայն մեղեդիին՝ Աստուծոյ բնութշ Զայնին, որ
կու գայ մեզի ոչ թէ գոեհիկ պոռոցներու խառնաշփոթ աղմուկի մէջէն, այլ
հաւատով կենսաւորուած կեդրոնացեալ աղօթքով ու կը բանայ սաւառնումի
և թոյլչփի նոր հորիզոններ: «Աղօթքը կը ծնանի հերոսներ, կը կերտէ
ազատարարներ և կը դարբնէ նուիրեալներ, կը պարգեւէ յաւերժացողներ»:
Հոգեւոր Լոյսը (հաւատալ), երաշխիքն է յաւիտենական կեանքի: Յաւիտե-
նականութեան ներկայութիւնը սկիզբ կ'առնէ մեր անձին մէջ "Հաւատամք ի
մի Աստուած" ով երբ վստահինք մեր ջնջաւոր կեանքը Անոր բարի Կամփին:

Ինչո՞ւ հաւատալու գերագոյն պատճառը Յիսուս Քրիստոսի ջնորհած
յաւիտենական կեանքն է: Ան կը փոխակերպէ հաւատացող անձը.

**«Մահէն դէպի կեանք, կեանքէն դէպի
առաւել կեանք և դէպի յաւիտենականութիւն»:**

«Մեր մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց
Ու անհամբեր հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալոյսի մ'Արշալոյսի մը՝ որուն
(Հաւատացէ՛ք ինձ Մայրեր)
Ես ոտնաձայնը կ'առնեմ...»:
--Դ.Վարուժան

Մայիս 9, 1994
Քորոնթո